

Էջմիածին քաղաքի, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 12, 12/1  
հողամասերում նախատեսվող ավտոգազալիցքավորման  
ճնշումային կայան  
Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

<< Առաջին Միժեռնակ >> ՍՊԸ տնօրեն  
Տնօրեն՝ Գ.Զաքարյան



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	4
1.2	Հապավումներ.....	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	6
1.4.1	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր .....</i>	6
1.4.2	<i>Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց</i> 11	
1.4.3	<i>Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ .....</i>	12
1.4.4	<i>Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա .....</i>	12
1.4.5	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....</i>	12
1.4.6	<i>Գազամատակարարում .....</i>	13
1.5	<i>Գազայցակայանի տեխնիկական բնութագրերը .....</i>	15
1.5.1	Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը.....	16
1.5.2	Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում .....	19
1.6	<i>Ջրային պաշարների պահպանություն .....</i>	20
1.6.1	Կոմպրեսորների հովացում .....	20
1.6.2	Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները.....	20
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	22
2.1.	Դիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը	22
2.2.	Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը .....	23
2.3.	Տարածաշրջանի հողերի նկարագիրը .....	24
2.4.	Կլիման և օդերևութաբանական պայմանները .....	25
2.4.1.	Ջերմաստիճանը .....	25
2.4.2.	Խոնավությունը.....	25
2.4.3.	Մթնոլորտային տեղումները .....	26
2.4.4.	Քամի.....	26
2.	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	28
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	29
3.1	Ռիսկերի գնահատում.....	29
3.2	Արտանետումների աղբյուրները .....	29
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....	30

3.3.1 Մթնոլորտային օդ..... 30

3.3.2 Ջրային ռեսուրսներ..... 30

3.3.3 Հողային ռեսուրսներ..... 30

3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը ..... 31

3.3.5 Աղմուկ..... 35

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... 36

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ..... 38

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	«Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Արմավիրի մարզ գյուղ Գրիբոյեդով
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ ք.Էջմիածին, Մարզարայի խճուղի թիվ 12
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ ք.Էջմիածին, Մարզարայի խճուղի թիվ 12

1.2 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ ք.Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12 հասցեում:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր**

ՀՀ ք.Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12 հասցեում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի նախագիծը մշակվել է <<Հիդրոգազիննախագիծ>> ՍՊԸ-ի կողմից, տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը հաստատող N22102019-04-0073 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը: Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում << Առաջին ծիծեռնակ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող բնական գազի լիցքավորման ճնշակայանի գազաֆիկացման աշխատանքային նախագիծը մշակված է համայնքի կողմից տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից տրված N0 02-22/2224 գրության առ 15.05.2019թ /տեխնիկական պայմանի/, հիմք Տրանս Գազ ՍՊԸ-ի կողմից տրված N0 01-13/537 գրության առ 03.05.2019թ և ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի համաձայն:

Համաձայն տրված տեխնիկական պայմանի գազամատակարարումը նախատեսված է համայնքը սնող <<Էջմիածին>> ԳԲԿ-ից: ԱԳԼՃԿ-ի օգտագործող սարքավորումը 2 ГП-10/250 МУ2 տիպի կոմպրեսոր: Գազի ծախսը Q=1000լսմ/ժամ: Մատակարարող գազի տրամագիծը ընդունվում է d108x6մմ ԳՕՍՍ 10704-91: Միացման կետում տեղադրվում է փական dy100 КЗЛ -16 տիպի: Ելակետային գազատարը dy100մմ, P=0.6 ՄՊա և Q=1000լսմ/ժամ: Գազատարի ստորգետնյա հատվածի երկարությունը կազմում է 1850մ, իսկ վերգետնյա հատվածի երկարությունը 613մ(Գազամատակարարման աշխատանքային նախագիծը նույնպես ենթարկվել է փորձաքննության):

Գազատարի վրա տեղակայվում է մուտքային գատիչ/ նախնական կուտակիչ/ և հետադարձ փական՝ ԱԳԼՃԿ-ի տարածքում:

ԱԳԼՃԿ-ի տարածքում նախատեսված գազալցակետային ռամպաները միջայունային չափերով թեթև ծածկով շինություններ են / 3.5մx11.0մ և 5.5մx31.0մ/ :

Կոմպրեսորային մոդուլը 4.0մx8.0մ առանցքային չափերով արտադրա-տեխնոլոգիական մեկ հարկանի մասնաշենք է, H=3.6մ բարձրությամբ, պատերը՝ 400մմ հաստությամբ:

Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից:

Բարձր ճնշման պահուստային մարտկոցների ստորգետնյա մոդուլը / գազակուտակիչ բունկեր/ 4.0մx7.0մ առանցքային չափերով արտադրատեխնոլոգիական մասնաշենք է ,

H=-1.75մ---+2.0մ բարձրությամբ, 300մմ հաստությամբ միաձույլ ե/բ պատերով,

ուղղանկյունաձև ստորգետնյա շինություն, որի ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից:

Սպասարկող շինությունը 10.0մx4.5մ առանցքային չափերով ծառայողական շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով : Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից:

Սպասասրահը 10.0մx 4.5մ առանցքային չափերով շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ - H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով:

Միջբլոկային և միջկոնտեյներային տեխնոլոգիական հաղորդակցուղիները մտնում են գործարանային սարքավորումների մեջ և տեղադրվում են համաձայն սարքավորումների հետ ստացվող նախագծերի, այդ իսկ պատճառով խողովակների ընտրություն չի կատարվում: Մոնտաժումը, փորձարկումը և աշխատանքների ընդունումը կատարվում է պահպանելով ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի պահանջները:

Կառուցապատվող տարածքի նկարագիր՝

ՀՀ ք.Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12 հողամաս

- Մակերեսը կազմում է՝ 0.2349 հա
- Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Առկա շինությունների բնութագրերը

Համաձայն անշարժ գույքի սեփականության N22102019-04-0073 վկայականի <<Առաջին Ծիծեռնակ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.2349 հա տարածքի վրա առկա են շինություններ՝ վերանորոգման կետ-181.2 քմ, լցակայան – 7.8քմ, հանգստի սենյակ-20.4քմ, ավտովագման կետ-31.7քմ, պարիսպ-20.2քմ: Տարածքում առկա կառուցապատման մակերեսը կազմում է 261.3քմ:

Համաձայն Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքային համայնքի կողմից 05.12.2019թ տրամադրված նախագծման թույլտվության 9.5 կետի կառուցապատման ցուցանիշը սահմանված է 80%, տարածքի մակերեսը՝ 2349քմ: Ընդհանուր տարածքում առկա կառուցապատումը և ակնկալվող կառուցապատումը գումարային կազմում է 1879.2 քմ:

Գոյություն ունեցող բոլոր շինությունները քանդվելու են կամ վերապրոֆիլավորվելու են :

Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում <<ԾԻԾԵՌՆԱԿ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող ավտոգազալիցքավորման ճնշակային կայանը (ԱԳԼՃԿ) նախատեսված է ավտոտրանսպորտային միջոցների սեղմված բնական գազով (CH4) աշխատելու հարմարեցված վառելիքային համակարգի գլանոթների և շարժական լիցքավորող կայանների գլանոթնորի շուրջօրյա լցավորման համար: ԱԳԼՃԿ-ի հզորությունը 1000 խմ/ժամ է , որի կազմի մեջ մտնում են՝

-ճնշակային կայան-երկու հատ ճնշակային կայանք ՄՊ-10/250 MY2  
 - ավտոլիցքավորման կետ նախատեսված 8/ուր/ ավտոմեքենայի համար /6+1+1-  
 թեթև մարդատար +միկրոավտոբուս+ բեռնատար/  
 -օպերատորական

-ստորգետնյա գազամբար 10հատ 400լիտր տարողությամբ՝ գործարանային  
 արտադրության կուտակիչներով

Գազասպառման համակարգի անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով  
 ճնշակայանում տեղադրվել է այրվող գազերի ազդանշանային սարք:  
 Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում սարքը  
 տալիս է լույսաձայնային ազդանշան և փակում է էլեկտրամագնիսական կափույրը:  
 Նախագծով նախատեսված են նաև հակահրդեհային միջոցառումներ, հրդեհի  
 մարման համար ԱԳԼՃԿ-ն նախատեսված է համալրել՝

Կրակմարիչ-ՕՊ-10-3հատ

Կրակմարիչ-ՕՄ-5-3հատ

Գազամատակարարումը իրականացվում համաձայն է <<Գազարոմ Արմենիա>>  
 ՓԲԸ-ի կողմից տրված N0 02-22/2224 գրության առ 15.05.2019թ /տեխնիկական  
 պայմանի/, հիմք <<Տրանս Գազ>> ՍՊԸ-ի կողմից տրված N0 01-13/537 գրության առ  
 03.05.2019թ և ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի համաձայն: Բարձր ճնշման վերգետնյա  
 գազատարին ներմիացումից հետո նախագծվող գազատարի վրա տեղադրվում է  
 dy100 սողնակային փական :

Ընդհանուր տարածքը կազմում է 2349 ք.մ, համաձայն


ճարտարապետահատակագծային առաջադրանքի կանաչապատման տոկոսը սահմանվել  
 է 20 %, շինարարական աշխատանքների ավարտից հետո ամբողջ տարածքը  
 կբարեկարգվի՝ կասֆալտապատվի և 469,8 քմ տարածքը կկանաչապատվի:



*Տարածքի գլխավոր հատակագիծ*



Ք. Էջմիածին, Մարզպարայի խճուղի թիվ 12 հասցեում կառուցվող  
 ավիտոցազգայնացրավորման ճնշակային կայան  
 Կառուցապատող՝ «Առաջին Ճիշտույն» ՍՊԸ  
 Գլխավոր հասակագիտի Ս՝ 1:100



Շենքերի և շինությունների դասավորություն

1. Ճնշակային/ցրմամբերադրային/ բորի
2. Գազի ստորջնջման կառավարիչներ /բարձր ճնշման մարտիդրների բորի/
3. Գազացավակետային ռանդս/ Դեպոզաններ ԲԱ-200/
4. Անվտանգության գոտի/պաշտպանիչ պատ/
5. Խանութ սրճարան
6. Սպասարան
7. Օպերատորի սենյակ
8. Հավանորենային ջրամբար/V=50մ<sup>3</sup>/
9. Հավանորենային հիդրանտ
10. Էլ. ենթակայան
11. Շահմարգել
12. Առաջնային կառավարչ/Քեֆաքաթ/
13. Էլ.դռնապանան սյուներ



Ֆիլեմարտ Ս. Բոչայրյան	
Նախագիտ. Ա. Արևսյան	
Ստորագր. Ս. Բոչայրյան	
Պաշտոն. ԱԱՀ	Ստորագր.

ՕԲՑԵԿՏ № 09/024-19 ԳԱ		Փուլ. Թեք. Թեք. Թեք. Թեք.
Ք. Կարապետյան, Մարզպարայի խճ. Ի 12 տարածքում կառուցվող ավիտոցազգայնացրավորման ճնշակային կայանի կառուցում		
ԱԳԱԿԿ-ի կառուցում	ԱԱՀ	
ԱԳԱԿԿ-ի գլխավոր հասակագիտի		ՎՊԸ

1\*\* Շինարարությունը իրականացվում է սեփական կայանի  
 N 22102019-04-0073, սրբված առ 22.10.2019թ. սահմաններում

**33**  
 ՔՅԱՍՍ  
 Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի  
 վերահսկողության բաժին  
 N 337022/3715-19  
 2019թ.

1.4.2 Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց

**Աշխատանքների կատարման ժամանակացույց**  
 Ք. Վաղարշապատ, Մարգարայի խճ. հ 12, 12/1 տարածքում ավտոգազալիցքավորման  
 ճնշակային կայանի կառուցում



Աշխատանքների տևողություն օրերով - ընդամենը 300 օր

Ը/Ը	Աշխատանքի անվանումը	Աշխատանքների տևողություն օրերով - ընդամենը 300 օր																														
		10	20	30	40	50	60	70	80	90	100	110	120	130	140	150	160	170	180	190	200	210	220	230	240	250	260	270	280	290	300	
1	Նախապատրաստական աշխատանքներ	—																														
2	Հողային աշխատանքներ		—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
3	Ճնշակային կայանի կառուցում: Բետոնե և Ե/բետոնե միմերի կառուցում		—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
4	Ճնշակային կայանի կառուցում: Ե/բետոնե սյունների կառուցում				—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
5	Ճնշակային կայանի կառուցում: Պատերի և ծածկի կառուցում							—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
6	Ստորգետնյա/պահուստային մարակոցների բլոկ/բունկերի կառուցում:								—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
7	Գազալցայունակների կառուցում/Բլոկ 1/:													—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
8	Գազալցայունակների կառուցում/Բլոկ 2/:																															—
9	Բաշխիչ աշտարակների և շանթարգելի տեղադրում																															—
10	Հիդրանտի և մետաղա տարայի /V=50մ³/տեղադրում																															—
11	Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ																															—
12	Տարածքի բարեկարգման աշխատանքներ																															—

Տարածքի համար: 12/1

Տնօրեն Ն.Գ.Ը.	Ս. Բոչարյան		Ք. Վաղարշապատ, Մարգարայի խճ. հ 12, 12/1 տարածքում ավտոգազալիցքավորման ճնշակային կայանի կառուցում	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախագծ Ս. Բոչարյան	Ս. Բոչարյան			ԱԳԼԿ-ի կառուցում	ԱԼ	1
Պաշտոն	ԱԱԸ	Ստորագ	Աշխատանքների կատարման ժամանակացույց	*Հիդրոգազի նախագիծ* ՄՊԸ		
			2018թ.			

### **1.4.3 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 469.8 քմ, նախատեսվում է սիզախոտ և թփեր: Ոռոգման նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում տարածքում առկա հողաբուսաշերտը կպահպանվի տարածքում հատուկ նախատեսված վայրում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

### **1.4.4 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա**

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ ք.Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12 հասցեում:

Շինարարական և գազատարի անցկացման աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ 150խմ և ետլիցք՝ 120խմ, մնացած զանգվածը կօգտագործվի տարածքի համահարթեցման նպատակով:

Ավելացած հողային զանգված կօգտագործվի տարածքի հարթեցման համար:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 38 մարդ, որից

- Բանվորներ -32 մարդ
- ԻՏԱ -6 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Էքսկավատոր՝ 1 հատ
- Կռունկ՝ 1 հատ
- Բեռնատար՝ 1 հատ
- Ինքնաթափ՝ 1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Բետոնի շաղախը կմատակարարվի ոլորտի մասնագիտացված կազմակերպություններից, տեղում բետոնի արտադրություն չի նախատեսվում:

### **1.4.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է մոտ 60 խմ (55 խմ տարածքում առկա շենք շինությունների քանդումից): Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված:

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 32 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 300 օր

$$W_{\text{խ.տ.}} = (6 \times 0.016 + 32 \times 0.025) \times 300 = 268,8 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

$K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 150

$$U_1 = 500 \times 0.0015 \times 150 = 112,5 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 381,3 խմ/շին. ժամ:**

Նախատեսվող ԱԳԼՃ կայանի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված N Է25610 տեխնիկական պայմանի: Տեխնիկական պայմանը կցվում է:

#### **1.4.6 Գազամատակարարում**

Համաձայն Գազաբյուրո Արմենիա ՓԲԸ 15.05.2019թ. N02-22/2224 գրության, Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12 հասցեում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումը  $O.=1000$  խմ/ժամ ծախսով հնարավոր է իրականացնել «Էջմիածին» ԳԲԿ-ն սնող (Ծպ-150) կողմնատար-գազատարի 0.3կմ-ից, որի տեխնիկական պայմաններն են՝

➤ Գործող գազատարում գազի ճնշումը	Pmin, աշխ. Ժ=0.8-1,7 ՄՊա
➤ Գազատարի տրամագիծը Ø (մմ)	159
➤ Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) ■ անհրաժեշտություն	չկա
➤ Միացման կետը	«Էջմիածին» ԳԲԿ-ն սնող (Dպ-150) կողմնատար-գազատարի 0.3կմ-ից
➤ Օբյեկտի հեռավորությունը գազատարից	ըստ նախագծային լուծումների գործող   նորմատիվների պահանջների
➤ Տեղադրվող գազի հաշվիչ	Ըստ-գազասպառման ծախսերի
➤ Լրացուցիչ պայմաններ	Կառուցել <ol style="list-style-type: none"> <li>1. համապատասխան հզորության գործարանային արտադրության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ),</li> <li>2. ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար,</li> <li>3. ԱԳԼՃԿ-ն սնող 2-րդ կատեգորիայի բարձր ճնշման գազատար,</li> <li>4. ԳԲԿ-ի և այն սնող կողմնատար-գազատարի նախագիծը հաշվարկել Pնախ, աշխ.=4.0 ՄՊա աշխատանքային ճնշման համար:</li> <li>5. ԳԲԿ-ի և այն սնող կողմնատար-գազատարի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համաձայնեցնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ -ի հետ:</li> </ol>

**1.5 Գազայցակայանի տեխնիկական բնութագրերը**

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության,  $-60^{\circ} \text{C}$  արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին:

ԱԳՆԿՍ դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ.

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01
Ծծմբաջրածին	-0,0015 գր/մ <sup>3</sup>

Թույլատրված պարունակությունը:

Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:

Գազի խտությունը, կգ/մ<sup>3</sup> – 0,65+0,85:

Նվազագույն ջերմատվությունը – 7920 կկալ/մ<sup>3</sup>

Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին – ըստ OCT 51.40-83:

ԱԳԿԿ մուտքին գազի ջերմաստիճանը .  $+30^{\circ}$ -ից  $-5^{\circ}$

ԱԳԿԿ մուտքին գազի ճնշումը. 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը – 19,6 ՄՊա:

Ելքի 0,8 ՄՊա ճնշման դեպքում ԱԳԿԿ-ի անվանական լիցքավորման հնարավորությունը օրական 250 մեքենա է:

Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 մ<sup>3</sup> - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 մ<sup>3</sup> - ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար:

Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը - 70 մ<sup>3</sup>

Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է:

ԱԳԿԿ աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ ԱԳԿԿ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Աշխատող կոմպրեսորի ԱԳԿԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է:

Նախագծի տեխնիկական որոշումները համապատասխանում են 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոններին»:

Համաձայն 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոնների»՝ խողովակների վթարային քանակ չի պահանջվում:

Սարքավորումների և խողովակաշարերի վիբրացիայի (տատանումների) մակարդակը համապատասխանում է Ռ-SU 26-12-11-75 «Գլանային օպոզիտային կոմպրեսորներ: Գազի ճնշման տատանման և հաղորդակցման տատանման հաշվարկի մեթոդակարգին» և ԳՈՍՏ 12.2.016-76.ՍՍԲՏ «Կոմպրեսորային սարքավորումներ: Անվտանգության ընդհանուր պահանջներին»:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԿԿ տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

**1.5.1 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը**

*ԱԳԼՃԿ-ում բնական գազի նախապատրաստումը ավտոմեքենաների լցավորման համար կատարվում է հետևյալ տեխնոլոգիական սխեմայով՝*

*բնական գազը բ/ճ գազատարից մուտքային պահանջվող ճնշմամբ P=6.0 կգ/սմ<sup>2</sup> անցնում է ԱԳԼՃԿ-ի մուտքային փականներով, առաջնային գազային գոխչով, ցանցային գոխչով/сепаратор/, յուղախտնավաանջատիչով և հետադարձ փականով/տես տեխնոլոգիական սխեման/: Նրանց միջոցով իրականացվում է գազի մաքրումը մեխանիկական խառնուրդներից, խոնավության և յուղի կաթիլներից, տրվում է ճնշակային տեղակայմանը, որը կահավորված է չորս աստիճանային օդային հովացման համակարգով և յուրաքանչյուր սեղմանաստիճանի համար խոնավանջատիչով, ապահովիչ կափույրներով, գազային ու ջրային մեկ աստիճանային կոմունիկացիաներով, ավտոմատ կառավարման համակարգով:*

***Ավտոլիցքավորման կետում տեղադրվում են բնական գազի ավտոմատ լիցքավորման ԲԱ-200 մակնիշի բաշխիչ աշտարակներ երկուական ճկափողով:***

*Որպես գազի պահեստավորված պաշար ընտրված են 10x400 կուտակիչներ: Կուտակիչներում գազի ճնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով: Բալոնում առավելագույն ճնշումը կազմում է 19.62ՄՊա /200մթն/*

*գազի ջերմաստիճանը՝ ոչ ավել քան +45°C*



մեխանիկական մնացորդների պարունակությունը՝ ոչ ավել քան 0.001գր/նմ<sup>3</sup>

խոնավությունը՝ 0.009գր/մ<sup>3</sup>

ցողի կետի ջերմաստիճանը՝ 30°C

ԱԳԼՃԿ-ում գազաշարժիչային վառելիքի արտադրության, կուտակման և գազաբալոնների լիցքավորման տեխնոլոգիական պրոցեսը իր մեջ ընդգրկում է՝

1. Գազի մաքրում հեղուկի կաթիլներից և մեխանիկական խառնուրդներից՝

գատիչների/սեպարատոր/ և գտիչների օգնությամբ

2. գազի քանակության հաշվառում

3. բնական գազի սեղմում ճնշակային տեղակայանքով, ճնշումը հասցնելով մինչև 24.5ՄՊա

/250մթն/, միաժամանակ ճնշակի յուրաքանչյուրսեղման աստիճանից հետո սառեցնելով սեղմվելուց տաքացած գազը

4. Գազի չորացում և մաքրում խոնավության կաթիլներից

5. Գազի պահեստավորում և հանդարտեցում կուտակման տարողություններում

6. Լիցքավորմամբ բաշխիչ աշտարակների/դիսպենսերների/ բարձր ճնշման ձկավորողների

միջոցով 19.61ՄՊա /200մթն/ ճնշում ունեցող գազի լցավորում գազաբալոնների մեջ:

Բացի նկարագրված տեխնոլոգիական պրոցեսներից, կայանի կառուցվածքի մեջ մտնում են

արտադրատեխնոլոգիական մասնաշենքը և առանձին տեխնոլոգիական սարքավորումների

արտաքին տեղակայումները, ավտոգազալիցքավորման սյունակներ՝ լիցքավորման բաշխիչ

աշտարակներ/դիսպանսերներ/ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքները՝ /գազատար և

ջրատար խողովակազծեր, մալուխներ և այլն/:

ԱԳԼՃԿ-ում բնական գազի նախապատրաստումը ավտոմեքենաների լիցքավորման համար

կատարվում է հետևյալ տեխնոլոգիական սխեմայով՝

Բնական գազը բարձր ճնշման սնող գազատարից մուտքային պահանջվող ճնշմամբ  $P=6.0$  կգ/սմ<sup>2</sup>

անցնում է ԱԳԼՃԿ-ի մուտքային փականով, առաջնային ցանցային գատիչով և գազային գտիչով,

որոնց միջոցով իրականացվում է գազի մաքրումը մեխանիկական խառնուրդներից ու

խոնավությունից և տրվում է ճնշակային տեղակայում: Ճնշակի յուրաքանչյուր աստիճանում գազը

որոշակի ճնշմամբ սեղմվելուց հետո ուղարկվում է հովացման համակարգ, գազի ջերմաստիճանը

համապատասխան աստիճանի իջեցնելու համար:

Ճնշակի հովացումը իրականացվում է ջրով կամ անտիֆրիզով, որի շրջանառությունը կատարվում

է փակ համակարգով: Ճնշակային տեղայակայանքում տաքացած ջուրը հովացման օդասառեցման

տեղակայման միջոցով սառեցվում է, որից հետո տրվում է հովացման ջրի տարողություն, որտեղից

մղող պոմպի միջոցով ուղղվում է ճնշակային տեղամաս, ճնշակային համակարգի հովացումը

կատարելու համար:

ԱԳԼՃԿ-ում գազալիցքավորումը նախատեսվում է ճնշակային տեղակայանքի միջոցով բնական

գազի սեղմման եղանակով:

Բնական գազը մինչև ճնշակայան մտնելը մտնում է հաշվառման հանգույց, որտեղ բացի հաշվառումից այն ֆիլտրացվում է, և մաքուր վիճակում մտնում է բարձր ճնշման համար նախատեսված կուտակիչ, որը համարվում է գազային նախնական փուլը:

1. Մինչև գազի մուտքը ճնշակայան, միջին ճնշման համար նախատեսված կուտակիչներից հետո տեղադրվում է գազային հետադարձ փակող փական, որի նպատակն է կանխել բարձր ճնշման գազի հետադարձ հոսքը գազամատակարարման ընդհանուր համակարգ, այնուհետև գազը բ/ճնշման համար նախատեսված կուտակիչից դուրս է գալիս և մտնում ճնշակային տեղամաս, որտեղ տեղադրված են 2 հատ ГП-10/250 МУ2 տիպի ճնշակային տեղակայում:

Սեղմված բնական գազի կուտակման համար, կախված լցակայանի արտադրողականությունից/ $Q=1000\text{մ}^3/\text{ժամ}$ /, նախատեսվում են բարձր ճնշման 10հատ 400լ տարողությամբ 250մթն ճնշմամբ կուտակիչներ, որոնք անցել են համապատասխան փորձարկում, ստուգվել են պատերի հաստությունները և վկայագրվել են համապատասխան իրավասու կազմակերպության կողմից:

Բարձր ճնշման կուտակիչները տեղակայված են ստորգետնյա տարբերակով, մուտքի կոլեկտորի խողովակի վրա տեղադրված է ապահովիչ արտանետիչ փական, ավելցուկային և ճնշման էլքում այլ ճանապարհներով ավելորդ գազի ճնշումը՝ 250 մթն-ից /275 մթն/ բարձր, մթնոլորտ արտանետելու նպատակով:

Սեղմված բնական գազը բարձր ճնշման կուտակիչներից գնում է դեպի գազայնացվորման սյունակներ, որտեղ մոնտաժված՝ թվով 4հատ լիցքավորման բաշխիչ աշտարակներ՝ (դիսպենսերներ) ավտոգազավառելիքի կարգավորող լիցքավորման համար, որը չափում է՝ նաև մեքենաներ լիցքավորվող գազի իրական զանգվածը կամ ծավալը, ճնշումը, ջերմաստիճանը և խտությունը, հաշվարկում լիցքավորված գազի արժեքը: Վահանակի վրա պետք է արտացոլվի չափման միավորի արժեքը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>), լիցքավորված գազի քանակը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>) և արժեքը:

Լիցքավորումը ղեկավարվում է օպերատորի կողմից՝ համակարգչի միջոցով:

Լիցքավորվող գազի զանգվածի թույլատրելի սխալանքը պետք է համապատասխանի արտադրող գործարանի փաստաթղթերին, բայց չի կարող գերազանցել +/- 1.0% սահմանը:

Կայանում նախատեսված է նաև կայանի հակահրդեհային հակավթարային ազդանշանային համակարգ, որի միջոցով նախազգուշացվում է վտանգը և անհրաժեշտության դեպքում ավտոմատ դադարեցվում է կայանի գազամատակարարումը, կազմակերպվում շինության համապատասխան օդափոխությունը: Կայանի տարածքը կայծակի ազդեցությունից պաշտպանվում է անհրաժեշտ

քանակի շանթարգելներով /3հատ/: Վթարային իրավիճակների համար նախատեսված են ԱԳԼՃԿ-ի գազամատակարարման հեռահար դադարեցում, միաժամանակ տեխնոլոգիական գծերից գազի արտանետում մթնոլորտ: Շինություններում և կուտակիչների բունկերում նախատեսված են գազոտվածության մակարդակի ավտոմատ հսկում: Ճնշակային տեղակայումների շինությունում ծավալի 0.5% գազի առկայության դեպքում միանում է լուսային կամ ձայնային ազդանշանը և վթարային արտածման օդափոխությունը, իսկ 1% դեպքում համապատասխանաբար ըստ այգորիթմի տեղի է ունենում ԱԳԼՃԿ-ի վթարային դադար կամ նորմալ դադար: Հրդեհի դեպքում ավտոմատ միանում է օդափոխության ներածման-արտածման համակարգը, իրագործվում է տեխնոլոգիական գծերից արտանետում և գազի մատակարարման դադարեցում ԱԳԼՃԿ: Հակահրդեհային նպատակների համար նախատեսվում է 1 հատ հակահրդեհային հիդրանտ և V=50մ<sup>3</sup> տարողությամբ ստորգետնյա մետաղյա բաք, որի կափարիչը վզիկով բարձրացված է հողի 0.00նիշը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում մեքենաների մոտենալուն, բացի դա հրդեհաշիջման համար նախատեսված է նաև 2 հատ ՕՊ-100 տիպի փոշային կրակմարիչ, 15 հատ փրփրային կրակմարիչ և 15 հատ 1.5x1.5 արեստյա ծածկոց: Ճնշակայանը բաղկացած է կոմպրեսորային մոդուլից, գազակուտակիչ ստորգետնյա բունկերից, օպերատորային շինությունից, ավտոմեքենաների գազալցակետից, սպասարահից, կոյուղաջրերի հավաքման հորից, հակահրդեհային հրդեհաշիջման համակարգից, էլեկտրաէներթակայանից և 3 հատ շանթարգելներից:

**1.5.2 Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում**

Ըստ տեխնոլոգիական գործընթացի մթնոլորտ է արտանետվում բնական գազ, որի հիմնական բաղադրիչն է՝ մեթանը (95.01%) և աննշան քանակներով հոտավորող նյութ՝ էթիլմերկապտան:

**1.6 Ջրային պաշարների պահպանություն**

Նախատեսվող ԱԳԼՃ կայանի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված N ԷՀ 5610 տեխնիկական պայմանի: Տեխնիկական պայմանը կցվում է:

**ԿՈՅՈՒՂԻ**

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվելու են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով ուղորդվում են նախատեսվող անջրանթափանց սեպտիկ հոր, որտեղից սանմաքրման ծառայության հետ կնքվող պայմանագրով կհեռացվեն տարածքից: Ընդհանուր նախատեսված է մոտ 120 այցելու սպասարկելու համար, օրեկան առաջացող հոսքաջրերի քանակը՝ 8.7 խմ, որով պայմանավորված սեպտիկ հորի ծավալը ընտրվել է  $4մ \times 5մ \times 3մ = 60$  խմ:

Սեպտիկ հորը պարբերաբար կդատարկվի և կմաքրվի պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպության կողմից:

**1.6.1 Կոմպրեսորների հովացում**

Կոմպրեսորների հովացման համար օգտագործվում է ջրային հովացման համակարգ: Ջուրը բաքից պոմպի միջոցով տրվում է կոմպրեսորների սեղման յուրաքանչյուր աստիճանի շապիկ, որտեղից հոսում է ջերմափոխանակիչի միջխողովակային հատված, որից հետո տրվում է ջրի օդային հովացման համակարգ (ABO), վերադառնում բաքի մեջ և նորից տրվում համակարգ:

Շրջանառու ջրի համակարգը փակ կոնտուր է և չունի արտահոսք: Համակարգում հովացման ջրի ընդհանուր ծավալը որոշվում է  $V_{\text{հոլ}} = d \times n \times t \times k$  բանաձևով, որտեղ.

$d$  – կոմպրեսորի հովացման համակարգի ջրի ժամային ծախսը, 1,2 մ<sup>3</sup>,

$n$  – աշխատող կոմպրեսորների քանակը, 2 հատ,

$t$  – աշխատաժամերի թիվը տարվա ընթացքում, 8640

$k$  – կոմպրեսորների շահագործման գործակիցը, 0,875:

$V_{\text{հոլ}} = 1,2 \times 2 \times 8640 \times 0,875 = 18144 \text{ մ}^3 / \text{տարի}:$

Հովացման փակ համակարգում կորուստների և համապատասխանաբար համալրման ծախսը կազմում է 1,5 %, որը կկազմի  $18144 \times 0.015 = 272.16 \text{ մ}^3 / \text{տարի}:$

Ընդամենը համալրման օրական միջին ծախսը կկազմի՝ 272.16 մ<sup>3</sup>:

Հաշվի առնելով, որ ջրի լրացումը կատարվում է միանվագ, առավելագույն ժամային ծախսը նույնպես կկազմի՝ 272.16 մ<sup>3</sup>:

**1.6.2 Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները**

Աշխատողների կենցաղային կարիքների և խմելու նպատակով ջրօգտագործումը.

$V_2 = N_1 K_2 T_3 + N_2 K_2 T_4$ , որտեղ.

$N_1$  - հերթափոխի պետ – 3 հոգի,

$K_2$  - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.016 խմ,

$N_2$  - սպասարկող անձնակազմ – 12 հոգի

$K_3$  - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.025 խմ,

$T_3$  - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը – 360

$T_4$  - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը - 360

$V_2 = 3 \times 0.016 \times 360 + 12 \times 0.025 \times 360 = 125,28$  խմ/տարի:

Կորուստները կազմում են – 1.5 %, տարեկան – 3.35 խմ

Արտահոսքը կկազմի – 123.4 խմ/տարի:

Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռը՝

- Ընդամենը ջրօգտագործում – 125.28 խմ/տարի
- Կորուստ – 1,87 խմ
- Ընդամենը արտահոսք – 123,4 խմ/տարի:

### 1.7 Թափոններ

Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոններ առաջանում են՝

մուտքային սեպարատորներում - գազը մաքրվում է մեխանիկական մասնիկներից և խոնավությունից,

խոնավագտիչում - գազը մաքրվում է կաթիլային խոնավությունից,

գտիչներում - գազը մաքրվում է յուղից:

Թափոնների քանակը կազմում է 220 կգ/տարի և կազմված են հետևյալ նյութերից:

սիլիկագել - 100 կգ,

յուղ - 120կգ,

Կոմպրեսորային բաժնում տեղադրված յուղորսիչներում կլանված յուղը հավաքվում է տարրողության մեջ և պայմանագրային հիմունքներով կտրամադրվի նշված թափոնների վնասագերծմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության:

Թափոնները պատկանում են վտանգավորության III դասին: Բաղկացած են մեխանիկական խառնուրդներից, ջրից, յուղից: Թափոնների ծածկագիրն է՝ 5410021102033:

Օգտագործված խոնավակլանիչը (սիլիկագել) չի պարունակում որևէ տոկսիկ նյութ և սանձառայության թույլատրությունից հետո կարող է տեղափոխվել քաղաքային աղբանոց:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1. Դիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 12 հասցեում: Տարածքը կառուցապատված է տարբեր շենք-շինություններով, ինչպես նաև բացօդյա ժամանցի համար նախատեսվող ծածկոցներով: Շենքերի հիմնական մասը կքանդվի, մեկ կառույցը կվերաձևափոխվի սպասասրահի: ԱԳԼՃ կայանի մուտքը և ելքը ապահովված է Մարգարայի խճուղուց:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Արարատյան դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, ունի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածություն:

Հյուսիսում՝ նախատեսվող գործունեության վայրից դեպի հյուս-արևելք, տարածքը իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթ, հատված ձորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլլեկտորներ: Ծայրամասային՝ արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում տարածքը ընդունում է բլրակային բնույթ:

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք: Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով: Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են տվյալ տարածաշրջանում, հիմնականում գետային նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ: Արարատյան հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և աղուտա - մարգագետնային լանդշաֆտները: Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված

չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում՝ շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա - կիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեդլենդներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին: Կիսաանապատի ռելիեֆը ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան մասում՝ քարքարոտ: Տարածաշրջանում հանդիպող յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով:

## 2.2. Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ այլուվիալ-պրոյուվիալ-դելյուվիալային նստվածքներով: Այլուվիալ-պրոյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետևյալ տարատեսակները՝ կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարսմամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆացիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Դրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ: Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ՝ կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները: Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ: Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ: Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ: Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն փոշենման տարրերի խառնուրդներ կամ էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում:

Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին կոպիճով: Հանդիպում է նաև խոշոր կոպիճ: Բեկորները կազմված են բազալտներից,

տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև: Մանրախճա- կոպճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը: Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ: Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է: Տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են այլուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս- նոյեմբեր ամիսներին:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը:

Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:

### 2.3. Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնումոռոզվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրավտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և



գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են կոռոզվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ակալախողերը:

Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

## 2.4. Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանը գտնվում է Արարատյան հարթավայրում՝ Վերջինս հանդիսանում է հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին՝ Այն իրենից ներկայացնում է Հայկական Լեռնաշխարհի առավել ցածր և պարփակված մասերից մեկը: Կլիմայական գոտուն բնորոշ առանձնահատկությունը խիստ մայրցամաքային լինելն է, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

### 2.4.1. Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -31 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 41 °C, ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 25.7 °C: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև Աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C**

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

### 2.4.2. Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 62%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 29%:

Աղյուսակ 6. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

2.4.3. Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 260 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 44 մմ, նվազագույնը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ 9-11 մմ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 7-ում:


Աղյուսակ 7. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը												միջին ամսական օրական առավելագույն , մմ		Ձևածածկույթ		
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ		
	Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր	
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92	
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42				


2.4.4. Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև Նկար 8-ում: Քամու միջին արագության ամենամեծ արժեքները գրանցված են ապրիլ և հոկտեմբեր ամիսներին: Ապրիլ ամսին՝ հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան (3.7 մ/վ), իսկ հոկտեմբեր ամսին՝ հարավ արևմտյան ուղղություններով (3.8 մ/վ): Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է ապրիլ ամսին և կազմում է 1.3 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 0.9 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը ( $\geq 15$  մ/վ) 12-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության

պատկերները բերված են ստորև Նկար 9-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 31%:



**Նկար 8. Քամու միջին արագությունների բաշխվածությունը**



**Նկար 9. Քամու ուղղությունների կրկնեղիությունը**

**2. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՂԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները),

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների և ռեժիմի վերահսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է գազալցումը:

Նախատեսվող գազալցման կայանը նախատեսված է շահագործել շուրջօրյա ռեժիմով: Ցերեկային ժամերին միջոցառումները իրականացվում են անմիջապես ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից: Մնացած ժամանակ՝ հերթափոխի պատասխանատուի կողմից:

**3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**3.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**3.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

### 3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

#### 3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

#### 3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 10խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 100քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

#### 3.3.3 Հողային ռեսուրսներ

Քանի որ տարածքը կառուցապատված է նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նոր հողային շերտի մեծ մակերեսների խախտում չի նախատեսվում:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը բացառելու համար աշխատանքներում կներգրավեն ժամանակակաից տեխնիկական միջոցներ:
- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը 60իսմ քանակով կպահվի պոլիէթիլենային պարկերում հարթակի վրա և շինարարական աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:
- Հողի բերրի շերտը՝ մոտ 200 քմ և 30սմ հզորությամբ(60իսմ), օգտահանումը և պահպանումը կիրականացվի հանգստի գոտու տարածքում հատուկ նախատեսված վայրում: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ համապատասխան, համաձայն ՀՀ կառավարության 2017թ փետրվարի 11-ի N 1404-Ն որոշման:
- Հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից կոճղերի, թփերի և խոշոր քարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ: Հողի բերրի և հնարավոր բերրի շերտը հանվում է տարանջատված, ապարներից առանձին:Կիրականացվի հողի բերրի շերտ ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորոյուրներ), բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո բերրի շերտը կոգտագործվի տարածքի համար նախատեսված կանաչապատման աշխատանքներում :

**3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- շինարարական աշխատանքների տեղամասերում կտեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, կփակցվեն հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացման համար տարածքում կտեղադրվի հրշեջ հիդրանտ:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

**3.3.5 ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

- ԱԳԼՃԿ-ի սեփականատերը կամ շահագործող անձն ապահովում է այն, որ վերանան ԱԳԼՃԿ-ի տարածքում բնական զազի կոմպրեսացված վառելիքի բաշխման հետ կապված բոլոր ռիսկերը, իսկ ռիսկերի վերացման անհնարինության դեպքում՝ հնարավորինս ապահովեն դրանց նվազեցումը:

- ԱԳԼՃԿ-ի սեփականատերը կամ շահագործող անձը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են հետևյալի համար՝



1) համապատասխանություն՝ բնական գազի կոմպրեսացված վառելիքի պատշաճ օգտագործման վերաբերյալ սույն կանոնակարգով նախատեսվող պահանջներին.

2) բնական գազի կոմպրեսացված վառելիքի բաշխման ժամանակ մարդկանց մարմնական վնասվածքի ստացման կամ գույքի վնասման ռիսկի կանխում.

3) պաշտպանություն գազի արտահոսքի դեպքում.

4) հավաստիացում իրավասու մարմնին առ այն, որ սույն կանոնակարգում սահմանված բոլոր պահանջվող միջոցառումներն իրականացվել են:

- ԱԳԼՃԿ-ի սեփականատերը կամ շահագործող անձը նախաձեռնում է բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի ապահովի աշխատողների անվտանգության ապահովմանն ուղղված նվազագույն միջոցների շարունակական իրականացումը՝

1) նվազագույն միջոցները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

ա. ծրագիր, որի նպատակն է բացահայտել վտանգները, գնահատել և կառավարել բնական գազի կոմպրեսացված վառելիքի բաշխման հետ կապված ռիսկերը,

բ. ծրագիր, որի նպատակն է աշխատողներին տալ հրահանգներ, տեղեկատվություն, ապահովել նրանց ուսուցումն ու աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը,

գ. աշխատողների մասնակցությամբ իրականացվող տեսչական ծրագիր,

դ. աշխատողների կողմից արտառոց դեպքերի և վտանգների մասին զեկուցման ֆորմալ ընթացակարգ,

ե. բոլոր դժբախտ պատահարների, արտառոց դեպքերի և հնարավոր վտանգների ուսումնասիրման ընթացակարգ,

զ. դժբախտ պատահարների, արտառոց դեպքերի և վտանգների առնչությամբ ուղղիչ միջոցառումների պատշաճ և ժամանակին իրականացումն ապահովող ընթացակարգ:

- Սեփականատերը կամ շահագործող անձը պարտավոր է ապահովել այն, որ սույն կանոնակարգի համաձայն պարտականությունների կատարման համար նշանակված աշխատողներն ունենան համապատասխան ունակություններ, որոնք թույլ կտան ճիշտ կատարել առաջադրանքները:

- Պահանջվող ունակությունների ձեռքբերման համար սեփականատերը կամ շահագործող անձն իրականացնում է աշխատողների ուսուցում, կրթում, գործնական ուսուցում աշխատավայրում կամ երկուսը միասին:

- Աշխատողների նշված ուսուցումը, իրազեկումը և հրահանգումը պետք է իրականացվի աշխատանքային ժամերին:

- ԱԳԼՃԿ-ի սեփականատերը կամ շահագործող անձն իրավունք ունի չթույլատրելու կամ արգելելու աշխատողին իրականացնելու բնական գազի կոմպրեսացված վառելիքի բաշխման հետ կապված աշխատանքներ, եթե տվյալ աշխատողը չի անցել ուսուցում աշխատանքի համակարգերի, անհրաժեշտ վարվելակերպի կանոնների մասին, որոնք պետք է պահպանվեն բնական գազի կոմպրեսացված վառելիքի ապահով պահեստավորման և բաշխման ժամանակ՝ ներառյալ հետևյալը՝

1) բնական գազի կոմպրեսացված վառելիքի հատկանիշներ և հրկիզման վտանգներ.

2) առնվազն 40 ժամվա փորձ՝ բնական գազի կոմպրեսացված վառելիքի հետ կապված վերահսկվող աշխատանքներում.

3) բաշխիչ աշտարակների ակտիվացման և վերահսկման ընթացակարգեր.

4) ապահով բաշխման ընթացակարգեր.

5) հաճախորդների տեղեկատվական համակարգերի, օրինակ՝ հասցեների բաց համակարգերի օգտագործում.

6) գազի գլանոթի ապահով լիցքավորում.

7) անվտանգության վերաբերյալ հաճախորդների հարցումներին պատասխանելը.

8) բնական գազի կոմպրեսացված վառելիքի արտահոսքի դեպքում արձագանքման ընթացակարգեր.

9) հրդեհի մարման հիմնական ընթացակարգեր՝ ներառյալ շարժական կրակմարիչների օգտագործումը.

10) մարդուն առաջին օգնություն ցույց տալու ընթացակարգեր.

11) անձնական պաշտպանական տեխնոլոգիական սարքավորումների պատշաճ օգտագործում և տեղադրում.

12) հաճախորդների վարքագծի և նրանց անընդունելի գործողությունների ըմբռնում.

13) ցանկացած այլ համապատասխան ընթացակարգեր և տեխնոլոգիական սարքավորումներ, որոնց կիրառումը կարող է անհրաժեշտ լինել արտակարգ իրավիճակում:

- Սեփականատերը կամ շահագործող անձը պահպանում են սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանության մասին հավաստող փաստաթղթերը՝ հինգ տարի ժամկետով, և իրավասու մարմնի պահանջով ներկայացնում դրանք վերջինիս:

- Սեփականատերը կամ շահագործող անձն ապահովում են, որ հրդեհի վերացման, բացահայտման և ազդանշանման համար նախատեսվող տարածքները և տեխնոլոգիական սարքավորումները, վթարային երթուղիները կամ ելքերն ունենան պահպանման համապատասխան համակարգ և պահպանվեն արդյունավետ աշխատանքային ու սարքին վիճակում՝ համապատասխան հմտություններին տիրապետող անձի կողմից:

- Ավտոգազալցակայանի սեփականատերը կամ շահագործող անձը պետք է՝

1) ապահովի, որ արտաքին կապալառուները կամ ԱԳԼՃԿ-ում աշխատանքներ իրականացնող կամ ծառայություններ մատուցող այլ անձինք ունենան իրենց աշխատանքը պատշաճ կատարելու ունակություններ ու փորձ.

2) տեղեկացնի ոչ մշտական աշխատողներին (օրինակ՝ ժամանակավոր կամ պայմանագրային աշխատողներին) համապատասխան ռիսկերի մասին և նրանց տրամադրի տեղեկատվություն տարածքում հակահրդեհային անվտանգության ընթացակարգերի մասին.

3) էթե արտաքին կազմակերպության ծառայողն աշխատում է ԱԳԼՃԿ-ում, ապա նա պետք է տվյալ անձի գործատուին (օրինակ՝ ժամանակավոր աշխատողներով ապահովող գործակալությանը) տրամադրի հստակ տեղեկատվություն՝ առկա համապատասխան ռիսկերի, ինչպես նաև ձեռնարկված կանխարգելիչ և պաշտպանական միջոցների մասին.

4) բոցավառման ժամանակ պետք է ապահովի ածխաթթվի, փրփրային կամ փոշեհատիկային կրակմարիչների, ավազի կամ հողի, ազբեստային կտորների կամ հատուկ կրակմարիչ գազերի և այլ միջոցների կիրառումը, որոնք համապատասխանեցված են ԱԳԼՃԿ-ի տեխնոլոգիական կանոններին:

### 3.3.6 ՇԱՆԹԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՆՑՈՒՄ

ԱԳԼՃԿ-ի էլեկտրասարքավորումների հողանցումը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշմամբ սահմանված պահանջներին: ԱԳԼՃԿ-ի յուրաքանչյուր շահագործվող հողանցման սարքավորում պետք է ունենա՝

1) հողանցման փաստաթուղթ, որը պարունակում է հողանցման սխեմայի ուրվագիծը, հիմնական տեխնիկական ստուգման տվյալներ՝ սարքի հողանցման դիմադրության մասին.

2) տվյալներ՝ սարքավորումների վերանորոգման, փոփոխությունների մասին: Հողանցվող սարքերի տեխնիկական սպասարկման և անսարքությունների բացահայտման և դրանց վերացման համար կատարված աշխատանքները պետք է ամրագրվեն հատուկ հողանցման կամ օպերատիվ մատյաններում: Արգելվում է էլեկտրակայանների շահագործումը, որոնց հողանցման սարքերի դիմադրությունը մեծ է թույլատրելի սահմանից: Շանթապաշտպանության և հողանցման համակարգերը պետք է շահագործվեն մինչև ԱԳԼՃԿ-ի սարքավորումների փորձարկումը:

### **3.3.7 Աղմուկ**

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական գործընթացին ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p>

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի անջրթափանց սեպտիկ հոր,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար:</li> </ul>

	վտանգներ	<p>Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>
--	----------	--

**ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ**

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

<p>Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում</p>	<p>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործընթացների գործունեության ստուգում</p>	<p>Մեխանիզմների շահագործման ընթացքում</p>	<p>Կապալառու</p>
<p>Իներտ շինանյութերի գնում</p>	<p>- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից</p>	<p>Իներտ նյութերի պահեստ</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում</p>	<p>Մատակարարման ընթացքում</p>	<p>Կապալառու, մատակարար</p>
<p>Կենցաղային աղբի առաջացում</p>	<p>- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Արտաքին գնում</p>	<p>Շինարարության ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն</p>
<p>Աշխատանքի անվտանգություն</p>	<p>- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Ստուգման գործընթացներ</p>	<p>Աշխատանքների ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու, պատվիրատու</p>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Закрытое акционерное общество  
«Газпром Армения»  
(ՅԱՕ «Գազպրոմ Արմենիա»)

ЗАМЕСТИТЕЛЬ  
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА  
ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР

ԵՄՊԻՆՔԻՆԻ ՎՅՈՑԷ 43 ԵՐԵՎԱՆ ԲԵՍՐԱԿԱ ՔՐԵՍԿԱՆ ԳՅՐԻ  
ՏԵԼ. (374 10) 294-888, 294-753 ԲԵՔՍ (374 10) 294-726  
E-mail: info@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»  
փակ բաժնետիրական ընկերություն  
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ԳԼԽԱԿՈՐ ՏՆՕՐԵՆԻ  
ՏԵՂԱԿԱԼ  
ԳԼԽԱԿՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ

0091, ՀՀ Երևան, Թբիլիսյան խճուղի 43  
ՏԵԼ. (374 10) 294-888, 294-753, ԲԵՔՍ (374 10) 294-726  
Էլ. փոստ՝ info@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

15. 05 2019 թ.

№ 02-22/2224

«Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ տնօրեն  
պրն. Գ. Զաքարյանին

պատճեն՝ «Տրանսգազ» ՍՊԸ տնօրեն  
պրն. Գ. Առաքելյանին

Արմավիրի ԳԳՄ տնօրեն  
պրն. Ս. Սկրտչյանին

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն թույլատրվում է, պատվիրատուի միջոցներով, պայմանագրային կարգով՝ «Տրանսգազ» ՍՊԸ 13.05.2019թ. 01-13/537 գրությամբ առաջադրված տեխնիկական պայմաններին համապատասխան, արտոնագիր ունեցող կազմակերպությունների միջոցով կազմել, ՀՀ Արմավիրի մարզի ք. Էջմիածին-Մարգարայի խճուղի 12 հասցեում «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) գազաֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և իրականացնել շին-հավաքակցման աշխատանքները՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ի հետ համաձայնեցված ու վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:

ԱԳԼՃԿ-ի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնել ՀՀ իրավական ակտերով սահմանված նորմերի (այդ թվում՝ շինարարական նորմերի և տեխնիկական կանոնակարգերի) դրույթների պահանջներին համապատասխան, իսկ գազամատակարարումը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով, ապահովելով «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» և «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգերի պահանջները:

Առդիր՝ գազաֆիկացման տեխնիկական պայմանները և եզրակացությունը – 5 էջից.

Ծանոթացում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 25.01.2019թ. №02-23/347 գրությունով տրված տեխնիկական պայմանները համարել անվավեր:

Ա. Հակոբյան

Վ. Գրիգորյան  
(010) 29-47-70

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»  
 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
 Գլխավոր տնօրենի տեղակալ-  
 Գլխավոր ճարտարագետ՝



Ա. Հակոբյան

«15» մայիսի 2019թ.

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՀՀ Արմավիրի մարզի ք. Էջմիածին-Մարգարայի խճուղի 12 հասցեում «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ավտոգազալիցրավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) (օբյեկտի անվանումը և հասցեն)

գազամատակարարումը,  $P = 0.6$  ՄՊա ճնշման և  $Q_{max} = 1000$  խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացնել գործող «Էջմիածին» ԳԲԿ-ն սնող  $D_{սլ} - 150$  կողմնատար-գազատարի 0.3կմ-ից, (գոյություն ունեցող գազատարի կամ ԳԲԿ-ի անվանումը)

որի տեխնիկական պայմաններն են՝

➤ Միացման տեղում գազի աշխատանքային ճնշումը	$P_{աշխ. գատ.} = 0.8 + 1.7UՊա$
➤ Գազատարի տրամագիծը $\varnothing$ (մմ)	159 մմ
➤ Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն	չկա
➤ Միացման տեղը	Ըստ տեխնիկական պայմանների – «Էջմիածին» ԳԲԿ-ն սնող $D_{սլ} - 150$ ստորգետնյա կողմնատար-գազատարի մոտավորապես 0.3կմ:
➤ Օբյեկտի հեռավորությունը գազատարից	Ըստ նախագծային լուծումների և գործող մոդալիզացիայի պահանջների:
➤ Տեղադրվող գազի հաշվիչը	Ըստ գազատարման ծախսերի՝ կահավորված էլեկտրոնային ճշտիչով:
➤ Լրացուցիչ պայմաններ	<p><u>Կարողել</u></p> <p>1. Գործարանային արտադրության, համապատասխան հզորության գազարաշխիչ կայան (ԳԲԿ), որի կազմում պետք է մտնեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) փոխմիացման (переключения), գազի մաքրման, գազի ճնշման նվազեցման, գազի հաշվառման, գազի հոտավորման և սեփական կարիքների համար գազի վերցման (отбор) հանգույցները;</li> <li>բ) էլեկտրասնուցման, կապի, կոռոզիայից պաշտպանման, պահպանման և հրդեհային ծայնա-ազդանշանային, ջրամատակարարման ու կոյուղու համակարգերը;</li> </ul> <p>2. ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար <math>P_{գալ.} = 4.0</math> ՄՊա):</p> <p>3. ԱԳԼՃԿ-ն սնող II-կատեգորիայի բարձր ճնշման գազատար:</p> <p>Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p>

Հիմք՝

- «Տրանսգազ» ՍՊԸ-ի 13. 05. 2019 թ. № 01-13/537 գրությունը,
- Տեխնիկական պայմանները:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
 ԳՏՑ Շ և Ս բաժնի պետ

Կազմեց՝

Վ. Ասրիյան

Վ. Գրիգորյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԷԶՄԻԱՇՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴՆՔ)

N 207

05. 12. 2019 թ.

Օրբեկտ \_\_\_\_\_ Ավտոգազալիցքավորման ճնշումային կայանի կառուցման  
(օրբեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)  
\_\_\_\_\_ ոլիսկայնության աստիճանը՝ 4-րդ

(հակիրճ բնորոշումը, հզորությունը

\_\_\_\_\_ աշխատանքային \_\_\_\_\_ նախագծային փաստաթղթերի մշակման համար:  
ոլիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ք. Էջմիածին, Էջմիածին – Մարգարա խճուղի թիվ 12,12/1, ծածկագիր՝ 04-002-1031-0022  
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող \_\_\_\_\_ << Առաջին Ծիծեռնակ >> ՍՊԸ, տնօրեն՝ Գ. Զաքարյան  
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,  
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը \_\_\_\_\_ հայտ 03.12.2019թ. վկայական N 22102019-04-0073  
(կառուցապատման նպատակով 22 օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ  
գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը \_\_\_\_\_ 1 տարվա  
(N 1 հավելվածի 31, 32-րդ կետին համապատասխան)

**ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է \_\_\_\_\_ հասարակական կառուցապատման գոտում  
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (\*) Հողամասի չափերը \_\_\_\_\_ 0,2349 հա  
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը \_\_\_\_\_ վերանորոգման կետ, լցակայան, հանգստի սենյակ, ավտոլվացման կետ, պարխսպ  
(ոնլիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (\*) Տրանսպորտային պայմանները \_\_\_\_\_ Էջմիածին – Մարգարա խճուղի  
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (\*) Բնժեներական ցանցեր և սարքավորումներ  
(չրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) \_\_\_\_\_ նախագծվող և կից տարածքով անցնող ինժեներական հաղորդագծեր  
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (\*) Կից հողամասեր \_\_\_\_\_  
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ  
(պահպանական գոտիներ) \_\_\_\_\_ չկան  
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ հարևան հողամասերի սահմանագծով տեղադրված ճակատներում բացվածքներ չնախատեսել  
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ՝ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ նախագծել ԱԳԼՃԿ, համաձայն ՀՀ կառավարության 21.12.2005թ. թիվ 2399-Ն որոշման, 28.08.2008թ. թիվ 1101-Ն որոշման և ՀՀՇՆ 21-01-2014թ. պահանջների համապատասխան

(ելնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, արկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) խճուղու եզրից 15.0 մ հեռու

9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտրոններից (օբյեկտներից)(մետր) կից

9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր) մինչև 6.0 մ

9.4. Կառուցապատման խտության գործակիցը 0,7  
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. Կառուցապատման տոկոսը 80%  
(կառուցապատվող(անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.6. Կանաչապատման տոկոսը 20 %  
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով(%))

9.7. Այլպահանջներ -----

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը -----

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները -----

12. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ նախագծել ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման ցանցեր  
(Պահանջներ՝ գոյություն ունեցող նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ)

12.1. (\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում Կցվում է <Վեղիա Ջուր> ՓԲԸ  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (\*) էլեկտրամատակարարում Կցվում է ՀԷՑ <Սուսալեռ> մասնաձ. <Էջմիածին> էլ. ցանց  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (\*) գազամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) Կցվում է <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ

12.4. (\*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու(ներառյալ դիտահորը)(համաձայն N1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով տեղադիրքը սահմանված էլեկտրոնային տվյալների) Կցվում է -----

12.5. Թույլ հոսանքներ -----

12.6. Աղբահանություն Էջմիածնի <ԲԿԿ>

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում -----  
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում \_\_\_\_\_ տարածքը բարեկարգել, կանաչապատել և լուսավորել \_\_\_\_\_  
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր \_\_\_\_\_ ավագ, խիճ, բետոն, քար, ամրան, ապակի և այլն \_\_\_\_\_  
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկություններ)

16. Պաշտպանական կառույցներ \_\_\_\_\_ ըստ նորմատիվ պահանջների \_\_\_\_\_  
(արտակարգ դրվածակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ \_\_\_\_\_ ըստ նորմատիվ պահանջների \_\_\_\_\_  
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ  
Խմբերի պաշտպանության միջոցառումներ \_\_\_\_\_ ըստ նորմատիվ պահանջների \_\_\_\_\_

19. Շրջակա միջավայրի պահպանում \_\_\_\_\_ ապահովել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից \_\_\_\_\_  
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում \_\_\_\_\_ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում  
շրջակա միջավայրը զերծ պահել շին. առքի կուտակումից, մշակել շին. աշխատանքների իրականացման  
ժամանակացույց \_\_\_\_\_  
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և  
տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը  
և նախագծի մշակման փուլերը \_\_\_\_\_ նախագիծը երկու փուլով, 1-ին փուլը զազատարի կառուցում,  
2-րդ փուլը ԱԳԼՃԿ-ի կառուցում \_\_\_\_\_  
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի  
փորձաքննությանը ներկայացվող պահանջներ \_\_\_\_\_ ստանալ համալիր փորձաքննության եզրակացություն \_\_\_\_\_  
(ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում  
կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում \_\_\_\_\_  
(իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային  
նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝  
N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ \_\_\_\_\_ կատարել իրազեկում \_\_\_\_\_  
(ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական  
եզրակացությունների ստացում \_\_\_\_\_  
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության  
պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝  
ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում \_\_\_\_\_

27. Այլ պայմաններ \_\_\_\_\_ նախագիծը համաձայնեցման ներկայացնել երեք օրինակից \_\_\_\_\_

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. Տ.



/ստորագրություն/

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

/անուն, ազգանուն/

ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17020



№ 001/1-006

Dami

Հաստատված է «ԴԱՄԻ» տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ-ի տնօրեն



Գ. Սարգսյան  
ստորագրությունը  
Կ.Տ.

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱԿՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N Փ-ԴՄ/005-01

ք. Երևան

«15» հունվարի 2020 թ.

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ-ի և «ԴԱՄԻ» Տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ-ի միջև «13» հունվարի 2020 թ-ին կնքված N Փ-ԴՄ-005/20 պայմանագրի՝ «15» հունվարի 2020 թ-ին փորձագետ Վարդուհի Սարգսյանի կողմից՝ պատվիրատուի հետ համաձայնեցված աշխատաժամերին, տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեցին «Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ-ին պատկանող ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մարզալոյան խճ. 12, 12/1 հասցեում կառուցվող ԱԳԼՃԿ արտադրական վտանգավոր օբյեկտի մոնտաժման նախագծային փաստաթղթերը:

Համաձայն նախագծային փաստաթղթերի նախատեսվում է՝ ԱԳԼՃԿ-ի մոնտաժման աշխատանքները:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված «Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ-ին պատկանող ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մարզալոյան խճ. 12, 12/1 հասցեում կառուցվող ԱԳԼՃԿ, արտադրական վտանգավոր օբյեկտի մոնտաժման նախագծային փաստաթղթերը համապատասխանում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին և մոնտաժման նախագծային փաստաթղթերին տրվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն:

Փորձագետ՝  /Գ. Սարգսյան/



«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ  
Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր**

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՀԱՄԱՐԸ՝ № 001/1-006

Սույն վկայագիրը հավաստում է, որ

**«ԴԱՄԻ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ**

(իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվանումը)

ՀԳՄ-ի գործունեության իրականացման վայր(եր)ը՝

ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչար 8

ՀԳՄ-ի իրավաբանական անձի գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 13, բն. 46

համապատասխանում է

**ՀՍ ՒՍՕ/ԻԷԿ 17020-2013 ստանդարտի**

(ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի նշագրերը և/կամ անվանումները)

պահանջներին, հավատարմագրված է Հավատարմագրման ազգային մարմնի կողմից որպես

**«ԴԱՄԻ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ի  
տրանսկական հսկողություն (փորձաքննություն) իրականացնող մարմին**

(ՀԳՄ-ի անվանումը և տեսակը)

և իրավասու է իրականացնել աշխատանքներ՝ սույն վկայագրի անբաժանելի մաս հանդիսացող հավատարմագրման վկայագրի հավելվածում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում:

Հավատարմագրման ժամկետը.

սկիզբը՝ 08.12.2017թ.


ավարտը՝ 08.12.2021թ.

Առաջին հավատարմագրման տարեթիվը՝ 18.09.2014թ.

Վերածնակելուված է (Վերաթողարկված է)՝

«Հավատարմագրման ազգային  
մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Կ.Տ.

  
(տրոհագրությունը)


**Նունե Մկրտչյան**  
(անունը, ազգանունը)

Հավատարմագրման վկայագիրը անվավեր է առանց հավելված(ների): Արձեղյում է սույն վկայագրի մատակի վերադրադրումը:

ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 49/2

000121






Տեխնիկական պայման №ԷՀ5610

(ջրամիացման, օրսահեռացման և հի հիդրանտի տեղադրման նախագծման)

Վ. Արմավիր ք. Վարդապետ Էջմիածին-Մարգարա խճուղի 12 «ԱՌԱՋԻՆ ԾԻՇԵՆՆԱԿ» ՍՊԸ 094 85 99 99



Google Earth

157003

Միացման տեսակ Նկարագիր	Ջրագին	հի հիդրամետի տեղադրման	Կոյուղագիծ
տրամագիծ, ճնշում, տեսակ	ժ=100մմ, P=1.0նմբն բույն	ժ=100մմ, P=1.0նմբն բույն	ջրահեռացման համակարգը բաղնկ բողնել նախկին օգտագործման
ջրամատ	07.00-12.00, 15.00-24.00	07.00-12.00, 15.00-24.00	
գրանիկիչարջուր			
միացման կետ	Էջմիածին-Մարգարա խճուղու եզրով անցնող ժ=100մմ ջրագծից	Էջմիածին-Մարգարա խճուղու եզրով անցնող ժ=100մմ ջրագծից	
միացման տրամագիծ	<b>համաձայն նախագծի</b>		
ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը			
Կառուցվող խողովակի			
ջրաչափական հանգույցի կետ			
Այլ պահանջներ	ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կառուցել դիտահոր, անհրաժեշտության դեպքում նախատեսել պոմպ	հակահրդեհային էլիդրամետի միացման կետում կառուցել դիտահոր	




Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը և այն համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը դիմողի հայեցողությամբ իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ վերջինիս պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ Դիմող անձի հաշվին: Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ Դիմող անձի հաշվին:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններն մատուցվում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի ժամկետով՝ գրանցման օրվանից սկսած, հակառակ դեպքում դրանք ենթակա են վերանայման:

Կառուցման ընթացքում հողային աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտվությունները /համաձայնությունները/:

«Արևմուտք» ՏՏ տնօրենի տեղակալ՝  Է. Հայրապետյան  
 Ինժեներական բաժնի պետ՝  Վ. Բաղդյան  
 Ինժեներական բաժնի մասնագետ՝  Լ. Հովհաննիսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

«Հ. ք. Փոստ» Ա. Արմենայան փող. 127

№ ՏՊ-170 - 6(10)/0016

«01» 01 2019թ.

**ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**  
6(10)կՎ լարման

**Համաձայն ԷՄՕԿ-ի 14.3 կետի պահանջների**

Տրվում է՝ «Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ տնօրեն Գ. Զաքարյանին Պատճենը՝ «Մուսալեռ» մ/ճ գլխավոր ճարտարագետ պարոն Ա. Ավագյանին Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի, Մարգարյան խճուղի, թիվ 15 հասցեում, բնակելի տարածքից դուրս գտնվող տարածքի էլ. մատակարարում. Պահանջվող հզորությունը՝ 630 կՎԱ.

Սնող ցանցի լարումը՝ 10 կՎ

1. Տեղադրել 630 կՎԱ հզորության 10/0,4 կՎ ԼՏԵ՝ համաձայն նախագծի:
2. Սնումն իրականացնել «Էջմիածին» 110/35/10 կՎ Ե/Կ-ից սնվող «Բջիջ33-ՏԵ34» 10կՎ օղային գծի(գ/հ 00694477) մոտակա հենարանից ճյուղավորումով՝ փոխարինելով ճյուղավորման հենարանը համապատասխան տիպի:
3. Ծյուղավորման սկզբում տեղադրել 10 կՎ գծային բաժանիչ:
4. Նախագիծը համաձայնեցնել մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի և «ՀԵՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրինության հետ:
5. Կառուցվող 10 կՎ օղային գծի ուղեգիծը համաձայնեցնել համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:
6. Հաշվառքի սարքերի տեղադրման կետը՝ ԼՏԵ-ում՝ տրանսֆորմատորի 0,4 կՎ լարման կողմում տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր:
7. Սնուցումը կիրականացվի քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԵՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության և մասնաճյուղի հետ կնքած էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:

Տեխնիկական պայմանների կատարման ժամկետը 2 տարի է:  
Տեխնիկական պայմանները նշված ժամկետում չկատարելու դեպքում կհամարվի անվավեր:

Տեխնիկական տնօրեն  Գ. Գրիգորյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵԿԱՎԱՐ**

«26» 11 2019թ.

№ ՋՏԱ/092.2/8419-19

«Առաջին ծիծեռնակ» ՍՊ ընկերության  
տնօրեն Գ.Ջաքարյանին  
ք.Էջմիածին, Կարճիկյան 25

Ի պատասխան Ձեր 11.11.2019թ. դիմումի

Հարգելի պարոն Ջաքարյան

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) քննարկել է Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մարգարայի խճուղի 12 հասցեում նախատեսվող ԱԳԼՃԿ-ի աշխատանքային նախագիծը և տեղեկացնում է, որ այն համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:

Հարգանքով՝

11/26/2019

X *Gegam Shakhbazyan*

ԳԵՂԱՄ ԸՆԽԲԱԶՅԱՆ

ԳԵՂԱՄ ԸՆԽԲԱԶՅԱՆ

Signed by: SHAKHBAZIAN GEGAM 2903670010



Կառավարող՝ Ա.Տազիրյան  
հեռ.՝ 060 44 03 17

0054, Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8, էլ.փոստ՝ utfsib@utfsib.gov.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

10, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3  
www.minurban.am, E-mail: info@minurban.am

----- N -----

«Արմավիրի մարզպետ»  
պարոն Համբարձում ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ի  
N 01/04.2/6384-18 գրություն

Հարգելի պարոն Մաթևոսյան

«Արմավիրի մարզի Էջմիածին-Մարզաբա խճուղի թիվ 12 հասցեում գտնվող, «ԱՌԱՋԻՆ ԾԻԾԵՌՆԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ավտոգազալիցքավորման ճնշումային կայանի կառուցման վերաբերյալ առաջարկության փաթեթը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված դրույթի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի դրական եզրակացությամբ, 2018 թվականի դեկտեմբերի 19-ի N01/11.2/6271-18 գրությամբ ուղարկվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն:

Միաժամանակ անհրաժեշտ է նախագծում նախատեսել սանհանգույցներ, ընդ որում դրանցից մեկը պետք է հարմարեցված լինի բնակչության հաշմանդամություն ունեցող խմբի պահանջներին:

Հարգանքով՝

X \_\_\_\_\_

Ավետիք ԷԼՈՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն,  
Տիգրան Մանուկյան, հեռախոս՝ 011 621 725



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

« Շ Ի Ն Է Բ Ս Պ Ր Տ »


ԱՆՀՐԱՆՓՈՒԿ ՊԱՏԱԿԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ, ԼՈՐԻ ԵՄՔ, Բ. ՎԱՆԱԶՈՐ  
ԲԱՆԱԾՅՈՐ, ՍՏ. ԳՐԱԿԱՆ 8/49-1

Հեռ. (077) 22 73 72  
E-MAIL shinexpirt@yandex.ru

ООО "ШИНЭКСПРТ"  
РА, ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ, г.  
ВАНАДЗОР, УЛ. ТАТЕРАКАН 8/49-1



"SHINEXPRT" LLC  
8/49-1 TATERAKAN ST., VANADZOR,  
LORI REGION, RA

« 12 » նոյեմբերի 2019թ.

No ՆՓ 19-011/17

Պետ. լիցենզիա No 17157

Պատվիրատու՝ «Ծիծեռնակ» ՍՊԸ  
Նախագծող՝ « Դիդրոգազչիննախագիծ » ՍՊԸ  
Տնօրեն՝ Ա. Քոչարյանին

### ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում «Ծիծեռնակ» ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող բնական գազի լիցքավորման ճնշակայանի նախագծային փաստաթղթերի

Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

( փորձաքննության եզրակացությունն առդիր 6 էջ):

«ՇԻՆԷԲՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝



Ա. Դովսեփյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման առաջադրանք
- Պայմանագիր
- Ճարտարապետահատակագծային առաջադրանք
- Սեփականության վկայականի պատճեններ

Փորձաքննության է ներկայացվել 1 ալբոմից կազմված նախագիծ:

**Ճարտարապետաշինարարական, ինժեներական մաս**

Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում <<ԾԻԾԵՈՆԱԿ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող բնական գազի լիցքավորման ճնշակայանի գազաֆիկացման աշխատանքային նախագիծը մշակված է համայնքի կողմից տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից տրված NO 02-22/2224 գրության առ 15.05.2019թ /տեխնիկական պայմանի/, հիմք Տրանս Գազ ՍՊԸ-ի կողմից տրված NO 01-13/537 գրության առ 03.05.2019թ և ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի համաձայն:

Համաձայն տրված տեխնիկական պայմանի գազամատակարարումը նախատեսված է համայնքը սնող <<Էջմիածին>> ԳԲԿ-ից : ԱԳԼՃԿ-ի օգտագործող սարքավորումը 2 ԴՊ-10/250 ՄՅ2 տիպի կոմպրեսոր: Գազի ծախսը Q=1000մ<sup>3</sup>/ժամ: Մատակարարող գազի տրամագիծը ընդունվում է d108x6մմ ԳՕՍՍ 10704-91: Միացման կետում տեղադրվում է փական dy100 K3Պ -16 տիպի: Ելակետային գազատարը dy100մմ, P=0.6 ՄՊա և Q=1000մ<sup>3</sup>/ժամ:

Գազատարի վրա տեղակայվում է 2հատ նախնական կուտակիչ և հետադարձ փական՝ ԱԳԼՃԿ-ի տարածքում:

Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում <<ԾԻԾԵՈՆԱԿ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող ավտոգազալիցքավորման ճնշակայան կայանը (ԱԳԼՃԿ) նախատեսված է ավտոտրանսպորտային միջոցների սեղմված բնական գազով (CH<sub>4</sub>) աշխատելու հարմարեցված վառելիքային համակարգի գլանոթների և շարժական լիցքավորող կայանների գլանոթների շուրջօրյա լցավորման համար: ԱԳԼՃԿ-ի հզորությունը 1000մ<sup>3</sup>/ժամ է ,նախատեսված 40 ավտոմեքենայի լցավորման համար,որի կազմի մեջ մտնում են՝

-ճնշակային կայան- երկու հատ ճնշակային կայանք ԴՊ-10/250 ՄՅ2

- ավտոլիցքավորման կետ 6 /վեց/ թեթև մարդատար ավտոմեքենաների համար

նախատեսված

- ավտոլիցքավորման կետ 2/երկու/ թեթևատար ավտոմեքենաների և ավտոբուսների համար

նախատեսված

-օպերատորական



2.գազի քանակության հաշվառում

3.բնական գազի սեղմում ճնշակային տեղակայանքով, ճնշումը հասցնելով մինչև 24.5ՄՊա /250մթն/, միաժամանակ ճնշակի յուրաքանչյուրսեղման աստիճանից հետո սառեցնելով սեղմվելուց տաքացած գազը

4.Գազի չորացում և մաքրում խոնավության կաթիլներից

5. Գազի պահեստավորում և հանդարտեցում կուտակման տարողություններում

6. Լիցքավորման բաշխիչ աշտարակների /դիսպենսերների/ բարձր ճնշման ձկափողորակների միջոցով 19.61ՄՊա /200մթն / ճնշում ունեցող գազի գազի լցավորում գազաբալոնների մեջ: Բացի նկարագրված տեխնոլոգիական պրոցեսներից , կայանի կառուցվածքի մեջ մտնում են արտադրատեխնոլոգիական մասնաշենքը և առանձին տեխնոլոգիական սարքավորումների արտաքին տեղակայումները, ավտոգազալիցքավորման սյունակներ՝ լիցքավորման բաշխիչ աշտարակներ/դիսպենսերներ/ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքները՝ /գազատար և ջրատար խողովակագծեր մալուխներ և այլն/:

ԱԳԼՃԿ-ում բնական գազի նախապատրաստումը ավտոմեքենաների լիցքավորման համար կատարվում է հետևյալ տեխնոլոգիական սխեմայով՝

Բնական գազը միջին ճնշման սնող գազատարից մուտքային պահանջվող ճնշմամբ 1.5մթն անցնում է ԱԳԼՃԿ-ի մուտքային փականով, գազի ծախսի հաշվառման հանգույցով, առաջնային ցանցային գատիչով և գազային գտիչով , որոնց միջոցով իրականացվում է գազի մաքրումը մեխանիկական խառնուրդներից ու խոնավությունից և տրվում է ճնշակային տեղակայում: Գնշակի յուրաքանչյուր աստիճանում գազը որոշակի ճնշմամբ սեղմվելուց հետո ուղարկվում է հովացման համակարգ, գազի ջերմաստիճանը համապատասխան աստիճանի իջեցնելու համար: Գնշակի հովացումը իրականացվում է ջրով կամ անտիֆրիզով, որի շրջանառությունը կատարվում է փակ համակարգով: Գնշակային տեղայնակայանքում տաքացած ջուրը հովացման օդասառեցման տեղակայման միջոցով սառեցվում է, որից հետո տրվում է հովացման ջրի տարողություն, որտեղից մղող պոմպի միջոցով ուղղվում է ճնշակային տեղամաս, օնշակային համակարգի հովացումը կատարելու համար:

ԱԳԼՃԿ-ում գազալիցքավորումը նախատեսվում է ճնշակային տեղակայանքի միջոցով բնական գազի սեղման եղանակով:

Բնական գազը մինչև ճնշակայան մտնելը ֆիլտրացվում է և մաքուր վիճակում մտնում է միջին ճնշման համար նախատեսված առաջնային կուտակիչներ, որը համարվում է գազալցման նախնական փուլը:

1. Մինչև գազի մուտքը ճնշակայան , միջին ճնշման համար նախատեսված կուտակիչներից հետո տեղադրվում է գազային հետադարձ փակող փական , որի նպատակն է կանխել բարձր ճնշման գազի հետադարձ հոսքը գազամատակարարման ընդհանուր համակարգ, այնուհետև գազը միջին ճնշման համար նախատեսված կուտակիչներից դուրս է գալիս և մտնում ճնշակային տեղամաս, որտեղ տեղադրված են 2 հատ ԴՄ-10/250 MY2 տիպի ճնշակային տեղակայում: Սեղմված բնական գազի կուտակման համար, կախված լցակայանի արտադրողականությունից, նախատեսվում են բարձր ճնշման 10հատ 400լ տարողությամբ 250մթն ճնշմամբ կուտակիչներ, որոնք անցել են համապատասխան փորձարկում, ստուգվել են պատերի ծանրությունները և





-ստորգետնյա գազամբար 10հատ 400լիտր տարողությամբ՝ գործարանային արտադրության կուտակիչներով

Գազասպառման համակարգի անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով ձնշակայանում տեղադրվել է այրվող գազերի ազդանշանային սարք:

Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում սարքը տալիս է լույսաձայնային ազդանշան և փակում է էլեկտրամագնիսական կափույրը:

Նախագծով նախատեսված են նաև հակահրդեհային միջոցառումներ, հրդեհի մարման համար ԱԳԼՃԿ-ն նախատեսված է համալրել՝

Կրակմարիչ ОП-10-3 հատ

Կրակմարիչ ОУ-5-3 հատ

Գազամատակարարումը իրականացվում է համաձայն <<Գազայրում Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից տրված № 02-22/2224 գրության առ 15.05.2019թ /տեխնիկական պայմանի/, Բարձր ձնշման վերգետնյա գազատարին ներմիացումից հետո նախագծվող գազատարի վրա տեղադրվում է Ø100 սողնակային փական :

**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՍ**

ԱԳԼՃԿ-ում բնական գազի նախապատրաստումը ավտոմեքենաների լցավորման համար կատարվում է հետևյալ տեխնոլոգիական սխեմայով՝ -բնական գազը մ/ձ գազատարից մուտքային պահանջվող ձնշման  $P=6.0կգ/սմ^2$  անցնում է ԱԳԼՃԿ-ի մուտքային փականներով , առաջնային գազային զտիչով, ցանցային զտիչով/сепаратор/, յուղանջատիչով և հետադարձ փականով/տես տեխնոլոգիական սխեման/: Նրանց միջոցով իրականացվում է գազի մաքրումը մեխանիկական խառնուրդներից, խոնավության և յուղի կաթիլներից, տրվում է ձնշակային տեղակայմանը, որը կահավորված է չորս աստիճանային ջրային հովացման համակարգով և յուրաքանչյուր սեղմանաստիճանի համար խոնավանջատիչով, ապահովիչ կափույրներով, գազային ու ջրային մեկ աստիճանային կոմունիկացիաներով, ավտոմատ կառավարման համակարգով:

Ավտոլիցքավորման կետում տեղադրվում են բնական գազի ավտոմատ լիցքավորման ԲԱ-200 մակնիշի բաշխիչ աշտարակներ երկուական ձկափողով:

Որպես գազափ պահեստավորված պաշար ընտրված են 10x400 կուտակիչներ: Կուտակիչներում գազի ձնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով:Բալոնում առավելագույն ձնշումը կազմում է 19.62ՄՊա /200մթն/

գազի ջերմաստիճանը՝ ոչ ավել քան +40 °C մեխանիկական մնացորդների պարունակությունը՝ ոչ ավել քան 0.001գր/մ<sup>3</sup> խոնավությունը՝ 0.009գր/մ<sup>3</sup>

ցողի կետի ջերմաստիճանը՝ 30 °C

ԱԳԼՃԿ-ում գազաշարժիչային վառելիքի արտադրության , կուտակման և գազաբալոնների լիցքավորման տեխնոլոգիական պրոցեսը իր մեջ ընդգրկում է՝

1. Գազի մաքրում հեղուկի կաթիլներից և մեխանիկական խառնուրդներից՝ գատիչների/սեպարատոր/ և գտիչների օգնությամբ




**վկայագրվել են համապատասխան իրավասու կազմակերպության կողմից:**

Բարձր ճնշման կուտակիչները տեղակայված են ստորգետնյա տարբերակով, մուտքի կոլեկտորի խողովակի վրա տեղադրված է ապահովիչ արտանետիչ փական, ավելցուկային և ճնշման ելքում այլ ճանապարհներով ավելորդ գազի ճնշումը՝ 250 մթն-ից բարձր, մթնոլորտ արտանետելու նպատակով:

Սեղմված բնական գազը բարձր ճնշման կուտակիչներից գնում է դեպի գազալցավորման սյունակներ, որտեղ մոնտաժված՝ թվով 4 հատ / 3 հատ թեթև մարդատար ավտոմեքենաների համար և 1 հատ բեռնատար ավտոմեքենաների և ավտոբուսների համար / լիցքավորման բաշխիչ աշտարակներ՝ (դիսպենսերներ) ավտոգազավառելիքի կարգավորող լիցքավորման համար, որը չափում է նաև մեքենաներ լիցքավորվող գազի իրական զանգվածը կամ ծավալը, ճնշումը, ջերմաստիճանը և խտությունը, հաշվարկում լիցքավորված գազի արժեքը: Վահանակի վրա պետք է արտացոլվի չափման միավորի արժեքը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>), լիցքավորված գազի քանակը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>) և արժեքը: Լիցքավորումը ղեկավարվում է օպերատորի կողմից՝ համակարգչի միջոցով:

**Լիցքավորվող գազի զանգվածի թույլատրելի սխալանքը պետք է համապատասխանի արտադրող գործարանի փաստաթղթերին, բայց չի կարող գերազանցել +/- 1.0% սահմանը:**

Կայանում նախատեսված է նաև կայանի հակահրդեհային հակավթարային ազդանշանային համակարգ, որի միջոցով նախազգուշացվում է վտանգը և անհրաժեշտության դեպքում ավտոմատ դադարեցվում է կայանի գազամատակարարումը, կազմակերպվում շինության համապատասխան օդափոխությունը: Կայանի տարածքը կայծակի ազդեցությունից պաշտպանվում է անհրաժեշտ քանակի շանթարգելներով: Վթարային իրավիճակների համար նախատեսված են ԱԳԼՃԿ-ի գազամատակարարման հեռահար դադարեցում, միաժամանակ տեխնոլոգիական գծերից գազի արտանետում մթնոլորտ: Շինություններում և կուտակիչներում բունկերներում նախատեսված են գազուղվածության մակարդակի ավտոմատ հսկում: Ճնշակային տեղակայումների շինությունում ծավալի 0.5% գասզի առկայության դեպքում միանում է լուսային կամ ձայնային ազդանշանը և վթարային արտածման օդափոխությունը, իսկ 1% դեպքում համապատասխանաբար ըստ ալգորիթմի տեղի է ունենում ԱԳԼՃԿ-ի վթարային դադար կամ նորմալ դադար: Հրդեհի դեպքում ավտոմատ միանում է օդափոխության ներածման-արտածման համակարգը, իրագործվում է տեխնոլոգիական գծերից արտանետում և գազի մատակարարման դադարեցում ԱԳԼՃԿ: Հակահրդեհային նպատակների համար նախատեսվում է 1 հատ հակահրդեհային հիդրանտ և V=50մ<sup>3</sup> տարողությամբ ստորգետնյա մետաղյա բաք , որի կափարիչը վզիկով բարձրացված է հողի 0.00 միշը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում մեքենաների մոտենալուն, բացի դա հրդեհաշիջման համար նախատեսված է նաև 2 հատ ՕՄ-100 տիպի փոշային կրակմարիչ, 15 հատ փրփրային կրակմարիչ և 15 հատ 1.5x1.5 արբեստյա ծածկոց: Ճնշակայանը բաղկացած է կոմպրեսորային մոդուլից, գազակուտակիչ ստորգետնյա բունկերից, օպերատորային շինությունից, ավտոմեքենաների գազալցակետից, սպասասրահից, կոյուղաջրերի հավաքման հորից , յուղաբռնիչից, հակահրդեհային ջրի բաքերից, էլեկտրաենթակայանից և 2 հատ շանթարգելներից: Գազակուտակիչ բունկերն իրենից ներկայացնում է 4.0x 3.0մ առանցքային չափերով, 300մմ հաստությամբ միաձույլ ե/բ պատերով, ուղղանկյունաձև ստորգետնյա շինություն,



որի ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: ԱԳԼՃԿ-ի տարածքում նախատեսված գազալցակետային ռանպաները միջսյունային չափերով թեթև ծածկով շինություններ են / 3.0x9.6մ և 3.0x28.8մ / : Կոմպրեսորային մոդուլը 3.5x 8.0մ առանցքային չափերով արտադրա-տեխնոլոգիական մասնաշենք է, H=3.6մբարձրությամբ, պատերը՝ 400մմ հաստությամբ: Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Սպասարկող շինությունը 10x4.5մ առանցքային չափերով ծառայողական շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով: Սպասարահը 10x4.5մ առանցքային չափերով շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով: Միջբլոկային և միջկոնտեյներային տեխնոլոգիական հաղորդակցուղիները մտնում են գործարանային սարքավորումների մեջ և տեղադրվում են համաձայն սարքավորումների հետ ստացվող նախագծերի: Միջբլոկային և միջկոնտեյներային տեխնոլոգիական հաղորդակցուղիները մտնում են գործարանային սարքավորումների մեջ և տեղադրվում են համաձայն սարքավորումների հետ ստացվող նախագծերի, այդ իսկ պատճառով խողովակների ընտրություն չի կատարվում: Մոնտաժումը, փորձարկումը և աշխատանքների ընդունումը կատարվում է պահպանելով ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի պահանջները:

Ուսումնասիրելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպորտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը նշում է.

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մար և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:
4. Նախագիծը անհրաժեշտ է ենթարկել նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության և տեխնիկական ու հակահրդեհային մասով փորձաքննության համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից:

Ելնելով վերը նշվածից «Շինէքսպորտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին քաղաքաշինական մասով և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ

Գլխավոր ինժեներ՝  Ա. Զախյան  
 Փորձագետ՝  Ա. Դավթյան  
 Փորձագետ՝  Ա. Առաքելյան

